

DOI: 10.59560/18291155-2023.2-10



**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԱՐՅԱՆ**

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի  
տեսության և սահմանադրական  
իրավունքի ամբիոնի վարիչ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՈՒՆՔԸ ԵՎ «ՂԱՏԱՎՈՐԸ  
ԵՆԹԱԿԱ Է ՕՐԵՆՔԻՆ» ԴՐՈՒՅԹԸ CONTRA LEGEM  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Ամփոփագիր**

Հոդվածում քննարկվում է contra legem իրավունքի զարգացման դոկտրինի և օրինականության սկզբունքի, «դատավորը ենթակա է օրենքին» դրույթի հարաբերակցությունը: Հեղինակը, օրինականության սկզբունքը վերլուծելով «թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի» մաքսիմի տեսանկյունից, եզրակացնում է, որ օրենքի պահանջների անշեղ կատարումը (օրինականությունը) ոչ թե նպատակ է, այլ միջոց է: Եթե օրինականության սկզբունքն անշեղորեն պահպանելը կարող է հասարակարգի համար ունենալ կործանարար նշանակություն, ապա օրինականություն սկզբունքից պետք է կատարել բացառություն և հայտարարել՝ «թող օրենքը պարտվի, բայց աշխարհը չկործանվի»:

Իրավունքի բոլոր սկզբունքները, այդ թվում օրինականության սկզբունքը, ունեն բացառություններ: Օրինականության սկզբունքից և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթից միակ թույլատրելի բացառությունը contra legem իրավունքի զարգացման դոկտրինն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՄԱՐՅԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
◆ 2(110)2023

Հետխորհրդային դատավորը, *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա օրենսդրական կարգավորման անտրամաբանության կամ անարդարության աղաղակող լինելը կարող է գնահատել «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով, որի չափորոշիչներն այն աստիճան ցածր են, որ դատավորին կազատի քաղաքական իշխանության հնարավոր «հարձակումներից»:

Հիմնաբառեր. իրավունքի սկզբունք, իրավունքի մաքսիմ, *contra legem* իրավունքի զարգացման դոկտրին, օրինականություն, դատավորը գործում է օրենքին համապատասխան, դատավորը ենթակա է օրենքին, «*Pereat mundus et, fiat justitia*»:

## 1. Ներածություն

### 1.1. Ընդհանուր դրույթներ

*Contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի համատեքստում օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը քննարկելիս կօգտագործվի «հետխորհրդային պետության դատավոր (հետխորհրդային դատավոր)» ձևակերպումը. նկատի ունենք հետխորհրդային այն պետությունները, որոնց քաղաքական համակարգում դեռևս պահպանվել են իրավունքի նկատմամբ խիստ էթատիկ մոտեցումները, իսկ դատավորների մոտ՝ լեգիզմը:

Սույն հոդվածում չի քննարկվում օրենքին հակառակ իրավունքի զարգացման դոկտրինի կիրառման ինստիտուցիոնալ համակարգը, ուստի «հետխորհրդային դատավոր» ընդհանուր ձևակերպումից չպետք է եզրակացնել, որ այս դոկտրինի հասցեատերերը բոլոր ատյանի դատավորներն են (սա առանձին քննարկման հարց է):

Հետխորհրդային դատավորի կողմից միայն օրենքին համապատասխան գործելու պահանջը թեև դիտարկվում է դատավորի (դատարանի) անկախության սկզբունքի տեսանկյունից, սակայն «դատավորը ենթակա է

օրենքին» կամ «դատավորը գործում է օրենքին համապատասխան» դրույթները պարունակում են նաև դատական գործունեությունում օրինականությունը պահպանելու հրամայական: Ուստի այս աշխատանքում օրինականության սկզբունքը և դատավորների անկախության համատեքստում՝ «օրենքին համապատասխան գործել» դրույթը կդիտարկվեն միասնության մեջ:

*1.2. Օրինականության սկզբունքը և «դատավորը գործում է օրենքին համապատասխան» դրույթը ՀՀ Սահմանադրությունում*

2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են ինչպես օրինականության, այնպես էլ դատավորի անկախության սկզբունքները: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի (օրինականության սկզբունքը) 1-ին մասի համաձայն. «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Այս դրույթը վերաբերում է բոլոր պետական մարմիններին, իսկ դատավորների (դատարանների) վերաբերյալ ՀՀ Սահմանադրությունում մի քանի անգամ նշվում է, որ նրանք անկախ են և գործում են օրենքներին համապատասխան: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և **օրենքներին համապատասխան**», 164-րդ հոդվածի 1-ին մասում կրկին նշվում է. «Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և **գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան**»:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածում նշվում է, որ արդարադատությունն իրականացվում է Սահմանադրությանը և **օրենքներին համապատասխան**, իսկ դատարանների անկախությունը վերտառությամբ 7-րդ հոդվածի 2-րդ մասում կրկին

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՐՈՒՄ 2(110)2023

նշվում է, որ դատարանը գործը կամ հարցը քննում և լուծում է Սահմանադրությանը և **օրենքին համապատասխան**:

Ինչո՞վ է պայմանավորված, որ պետությունը (քաղաքական իշխանությունը) հենց դատավորների վերաբերյալ մի քանի անգամ շեշտում է օրենքին համապատասխան գործելու մասին: Քաղաքական իշխանությունը նույնիսկ դատավորի անկախության սկզբունքին վերաբերող հոդվածներում է հետևողականորեն հիշեցնում, որ դատավորը, անկախ լինելով հանդերձ, կախված է օրենքից, ինչը փաստացի նշանակում է կախվածություն հենց քաղաքական իշխանության կամքից (օրենքն այնուամենայնիվ քաղաքական իշխանության կամքի ամրագրման ձև է): Մինչդեռ պետական մյուս մարմինների համար բավարար է համարվել մեկ անգամ նշել, որ նրանք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Օրենքների տեքստերում «դատավորը գործում է օրենքին համապատասխան» ձևակերպման *բազում անգամներ* օգտագործելը հուշում է այն մասին, որ քաղաքական իշխանությունը քողարկված ձևով՝ «դատավորը կախված է միայն օրենքից» ձևակերպման միջոցով փորձում է դատավորին դրդել իներտության, որպեսզի նա ունակ չլինի հակազդելու քաղաքական իշխանության՝ աղաղակող (խելագարության կամ մոլագարության հասնող չափերի) անտրամաբանություններին կամ անարդարություններին, որպեսզի դատավորը դա համարի իր ուժերից (իրավասությունից) վեր գործ, որպեսզի դատավորի մտքով երբևէ չանցնի, որ նա կարող է քննարկել առաջնային մանդատով օժտված մարմնի ընդունած օրենքի կարգավորման համապատասխանությունն իրավունքի սկզբունքներին, այդ թվում՝ իրավական աքսիոմներին, մաքսիմներին, իսկ դրանց միջև աղաղակող անհամապատասխանություններ բացահայտելու դեպքում, երբեք խիզախություն չունենա գործել օրենքի կոնկրետ դրույթին հակառակ:

Ընդ որում՝ քաղաքական իշխանությանը հաջողվել է հետխորհրդային դատավորի մոտ ձևավորել այն մտածողությունը, որ իրավունքի սկզբունքների հետ աղաղակող հակասության մեջ գտնվող օրենքի դրույթին հակառակվելու դեպքում դատավորը կգործի աններելի «մեղք»՝ կհակադրվի ժողովրդին և նրա կողմից ընտրված իշխանությունը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ քաղաքական իշխանությունն ամեն գնով փորձում է դատավորին կտրել իր բնական և գոյաբանական հիմքից՝ իրավունքից (իրավունքի սկզբունքներից, իրավական աքսիոմներից, մաքսիմներից<sup>1</sup>):

Հետաքրքիրն այն է, որ քաղաքական իշխանությունը, երբ հերթը հասնում է իր կողմից օրինականությունը պահպանելուն, ապա նա նույն բժախնդրությունը, ինչպես դատավորների դեպքում է, իր հանդեպ չի ցուցաբերում: Քաղաքական իշխանությունը որոշ իրավիճակներում կարող է մոռացության մատնել օրինականության սկզբունքը և գործադիր իշխանության մարմիններին նույնիսկ **նորմատիվ իրավական ակտով լիազորել պաշտոնապես** գործել օրենքին հակառակ (այս մասին հաջորդիվ):

1.3. «Թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի», թե՛ «թող օրենքը պարտվի, բայց աշխարհը չկործանվի»

Օրինականության պահպանման ձևապաշտական խստությունը (ռիգորիզմ<sup>2</sup>) ցայտուն դրսևորվում է դարերի պատմություն ունեցող «Pereat mundus et, fiat justitia (թող աշխարհը կործանվի, բայց իրավունքը հաղթի)» իրավական մաքսիմում (սենտենցիայում), որի էությունն այն է, որ

<sup>1</sup> Այս հասկացությունների միջև առկա աննշան տարբերությունները սույն աշխատանքում անկարևոր են:

<sup>2</sup> Ռիգորիզմ [ригори́зм - լատ. rigor խստություն] - որևէ սկզբունքի խստագույն պահպանումը: Բարոյագիտության մեջ՝ ձևապաշտության տարատեսակ, որը ենթադրում է բարոյական նորմերի անշեղ կատարումը՝ անկախ կոնկրետ պայմաններից, նույնիսկ հակառակ նպատակահարմարության, մարդկանց և հասարակության շահերի: Տե՛ս Հայրապետյան Ա.Պ., Օտար բառերի բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն): Եր.: Հեղինակային հրատ., 2011, էջեր 487-488:

պոզիտիվ իրավունքի (օրենքի) պահանջները պետք է անշեղորեն կատարվեն, անկախ նրանից, թե օրենքի պահանջների կատարումը գործնականում ինչ հետևանքներ կառաջացնի հասարակության և պետության համար:

Թեև այս իրավական սենտենցիան հիմնականում ընթերցվում և մեկնաբանվում է օրենքի (պոզիտիվ իրավունքի) իմաստով, սակայն այս ձևակերպման լատինատառ տեքստում նշվում է ոչ թե «lex»-ի այլ «justi»-ի մասին: Սակայն, եթե այս մաքսիմն ընթերցենք հենց «justi»-ի (արդարության, արդարադատության, իրավունքի) իմաստով, ապա այն կիմաստազրկվի այն պատճառով, որ իրավունքը (արդարությունը) չի կարող ներկայացնել այնպիսի պահանջ, որի կատարումը «կկործանի աշխարհը»<sup>1</sup>:

Այս իրավական մաքսիմը գործնական արժեք ունի, երբ խոսքն օրենքի (պոզիտիվ իրավունքի) մասին է: «Աշխարհի կործանման» վտանգ կարող է ծագել միայն պետության սահմանած օրենքի (պոզիտիվ իրավունքի) պահպանման հարցում ռիզորիզմ դրսևորելու դեպքում, երբ օրենքը (պոզիտիվ իրավունքը) ինքնին համարվում է ոչ թե միջոց, այլ նպատակ: Այս իմաստով՝ պատահական չէ, որ իրավական այս մաքսիմի մեկնաբանություններում այն ներկայացվում է առավելապես օրենքի (պոզիտիվ իրավունքի) պահանջների անշեղ կատարման համատեքստում:

Օրենքի պահանջների անշեղ կատարումը (օրինականությունը) ոչ թե *նպատակ է*, այլ իրավակարգի որոշակիության և կայունության ապահովման, հասարակական կյանքի ներդաշնակեցման *միջոց է*: Այս մասին խոսել են շատերը: Այսպես՝ Գ. Հեգելը նշում էր.

«Իրավունքի *բացակայության պայմաններում բարօրություն բարին չէ: Նույն կերպ, իրավունքը բարին չէ առանց* բարօրության. *fiat justitia* (թող

<sup>1</sup> «Աշխարհը կործանել» ձևակերպումն օգտագործվում է փոխաբերական իմաստով՝ նկատի ունենք պետաիրավական և հասարակական համակարգի գործունակության ճգնաժամային իրավիճակները:

արդարադատություն կատարվի) որպես դրա հետևանք չպետք է ունենա *pereat mundus* (թող աշխարհը կործանվի)»<sup>1</sup>:

Առանձին հեղինակներ կարծում են, որ Գ. Հեգելը 1821 թ. մի փոքր շտկել է «թող աշխարհը կործանվի, բայց իրավունքը հաղթի» մաքսիմը և նշել է՝ իրավունքը հաղթում է, որպեսզի աշխարհը չկործանվի<sup>2</sup>: Իրականում Գ. Հեգելը ոչ թե պարզապես «մի փոքր շտկել», այլ շրջել է այս արտահայտությունը. մի բան է, երբ ասվում է, որ օրենքը պետք է հաղթի, եթե նույնիսկ աշխարհը կործանվի, մեկ այլ բան է՝ օրենքը պետք է հաղթի, որ աշխարհը չկործանվի:

Գ. Հեգելի այս միտքը հետագայում առավել համակողմանի ներկայացրել է գերմանացի գիտնական Ռ. Իերինգը: Նա նշում էր, որ հնարավոր են ոչ սովորական իրավիճակներ, երբ պետությունը կարող է կանգնել երկրնտրանքի առջև՝ զոհաբերել օրենքը, թե՛ հասարակության բարիքը: Նա քննադատում է «թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի» մաքսիմը, քանի որ ստացվում է, որ աշխարհը գոյություն ունի հանուն օրենքի, մինչդեռ իրականում, ընդհակառակը, օրենքը գոյություն ունի հանուն աշխարհի: Եթե օրենքն ու աշխարհը հակադրվում են միմյանց, ապա կանոնը պետք է պահանջի՝ «*pereat justitia, vivat mundus* (օրենքը կորչում է, աշխարհն ապրում է)»<sup>3</sup>:

Ռ. Իերինգը հարց է տալիս, թե պետությունն արդյոք բոլոր դեպքերում և առանց որևէ բացառության պե՞տք է պահպանի գործող օրենքը, այնուհետև՝ իր հարցին պատասխանում է. «Չեմ վարանի բացասական պատասխանել»<sup>4</sup>: Հեղինակի մոտեցումը հստակ է.

<sup>1</sup> Гегель Г. Философия права. - М.: Юрайт, 2019. - С. 111.

<sup>2</sup> Евсеев А.П. Развитие договорных форм в конституционном праве: украинский и мировой опыт // Сравнительное конституционное обозрение. 2014. №1 (98). - С. 36.

<sup>3</sup> Рудольф фон Иеринг. Цель в праве. Том первый. - С.-Пб.: Изд. Н.В. Муравьева, 1881. - С. 308.

<sup>4</sup> Рудольф фон Иеринг. Указ. соч.

«Ինչպես պետության, այնպես էլ իրավունքի վերջնական նպատակը պետք է լինի հասարակության կենսապայմանների հաստատումն ու երաշխավորումը. իրավունքը գոյություն ունի հասարակության համար, այլ ոչ թե հասարակությունն իրավունքի համար: Որտեղ, որպես բացառություն, հանգամանքները պահանջում են, որ պետական իշխանությունը զոհաբերի կա՛մ իրավունքը, կա՛մ հասարակությանը, այն ոչ միայն լիազորված է, այլև պարտավոր է զոհաբերել իրավունքը և փրկել հասարակությանը: Անհատը՝ շահերի նման բախման դեպքում, երբ պետք է ընտրություն կատարի իրավունքի և իր կյանքի միջև, կարող է զոհաբերել իր կյանքը. նա զոհաբերում է միայն իրեն, մինչդեռ հասարակությունն ու իրավունքը շարունակում են գոյություն ունենալ: Բայց նույն կերպ վարվող պետական իշխանությունը մահացու մեղք է գործում, քանի որ նրա պարտականությունն է իրականացնել իրավունք ոչ թե հանուն իրավունքի, այլ հանուն հասարակության: Այս դեպքում հասարակության պահպանման համընդհանուր և բարձրագույն օրենքը վեր է խախտված ցանկացած առանձին օրենքից»<sup>1</sup>:

Ռ. Իերինգն ըստ էության վերահաստատում է անհերքելի ճշմարտությունները՝ ժողովրդի անվտանգությունը բարձրագույն օրենք է (salus populi summa lex esto), ինչպես նաև՝ Հին Հռոմում գործող կարգախոսը. «իրավունքի չափազանց ճշգրիտ իրականացումն առաջացնում է բարձրագույն անարդարություն» (Summum jus summa injuria):

Գերմանացի գիտնականների այս դատողությունները հետագայում վերարտադրեցին նաև ամերիկացի գիտնականները: Այսպես՝ ամերիկյան պրագմատիզմի և քաղաքական ռեալիզմի հիմնադիր Հ. Մորգենթաուն, բարոյական նորմերի անշեղորեն պահպանելու հարցի վերաբերյալ, նշում է.

<sup>1</sup> Рудольф фон Иеринг. Указ. соч. - С. 309.



«Անհապը կարող է ասել՝ «Fiat justitia, pereat mundus (թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի)», բայց պետությունը նման իրավունք չունի: Ե՛վ անհապը, և՛ ազգը պետք է քաղաքական գործողությունները գնահատեն համընդհանուր բարոյական սկզբունքների հիման վրա, ինչպիսին, օրինակ, ազատությունն է: Սակայն եթե անհապը բարոյական իրավունք ունի իրեն զոհաբերելու այս բարոյական սկզբունքներին, ապա ազգն իրավունք չունի բարոյականությունը վեր դասել հաջողված քաղաքականության պահանջներից, որն ինքնին հիմնված է ազգի գոյարևման բարոյական սկզբունքի վրա»<sup>1</sup>:

Այսպիսով՝ մարդկային միտքը ժամանակի ընթացքում վերաձևակերպեց «թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի» մաքսիմը և անցում կատարեց «թող օրենքը հաղթի, որպեսզի աշխարհը չկործանվի» մաքսիմին:

Իսկ ի՞նչ անել այն դեպքերում, երբ օրենքի ձևական պահանջի կատարման արդյունքում «աշխարհը կարող է կործանվել»: Պատասխանը հստակ է. օրենքի ոչ մի ֆորմալ պահանջ չպետք է պահպանվի, եթե դրա հետևանքով պետական և հասարակական համակարգը կարող է «կործանվել»: Օրինականության նկատմամբ մոտեցումը պետք է արմատապես վերանայել, երբ դրա պահպանումը ոչ միայն չի ծառայում իր նպատակին, այլ դրա պահպանումը կարող է հասարակարգի համար ունենալ կործանարար նշանակություն: Օրինակ՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում դեռևս 2021 թ. քննվում է ՀՀ չորրորդ նախագահի (ընտրվել է 2018 թ., իսկ լիազորությունները դադարել են 2022 թ.), այլ պետության քաղաքացի լինելու փաստերը թաքցնելու հանգամանքները: Եթե քրեական վարույթի ընթացքում հաստատվեն, որ Նախագահն ունեցել է այլ պետության քաղաքացիություն և այն թաքցրել է, ապա կստացվի, որ 2018 թ. ՀՀ ազգային ժողովը ՀՀ նախագահ է ընտրել ՀՀ

<sup>1</sup> **Моргентау Г.** Политические отношения между нациями: борьба за власть и мир // Теория международных отношений: Хрестоматия / Сост.: науч. ред. и коммент. П.А. Цыганкова. - М.: Гардарики, 2002. - С. 78.

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՈՒՄ 2(110)2023

Սահմանադրության խախտմամբ, իսկ դա նշանակում է, որ այդ տարիների ընթացքում նրա կայացրած բոլոր որոշումները (ստորագրած ակտերը, նրա ստորագրած օրենքների հիման վրա ձևավորված պետական մարմինները, Նախագահի կողմից պաշտոնների նշանակումները) զուտ ձևական չափանիշների տեսանկյունից հակասահմանադրական են<sup>1</sup>: Եթե հիմք ընդունենք, որ սահմանադրական օրինականությունն ինքնին նպատակ է, ուստի այն պետք է ցանկացած գնով «հաղթի», նույնիսկ եթե դրա հետևանքով պետաիրավական ողջ համակարգը կկործանվի: Հասկանալի է, որ ոչ մի բանական մարդ չի կարող ֆորմալ օրինականության պահպանման գնով զոհաբերի ողջ պետաիրավական համակարգի գործունակությունը, ուստի նման իրավիճակներում պետք է օրինականություն սկզբունքից կատարել բացառություն և հայտարարել՝ «թող օրենքը պարտվի, բայց աշխարհը չկործանվի»:

## 2. Օրինականության սկզբունքը և դրանից թույլատրվող բացառությունը

### 2.1. Ընդհանուր դրույթներ

Տարբեր իրավական համակարգերում օրինականության բովանդակության և արժևորման հարցում մոտեցումները կարող են տարբերվել: Օրինակ՝ կախված իրավական համակարգում «օրենք» հասկացության բովանդակությունից, օրինականության ըմբռնումը կարող է լինել տարբեր: Բոլոր դեպքերում, օրինականության էությունն այն է, որ պետության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հասցեատերերը պետք է **անշեղ** կատարեն այդ ակտերով սահմանված պահանջները:

Օրինականության վերաբերյալ բացարձակ և համակողմանի (ունիվերսալ) թվացող ճշմարտությունները տարբեր պատմական ժամանակա-

<sup>1</sup> **Гамбарян А.** Развитие парламентом права contra constitutionem в Республике Армения // Сравнительное конституционное обозрение. 2022. № 4 (149). - С. 134.

շրջաններում կամ տարաբնույթ իրավիճակներում կարող են փոփոխվել: Ամերիկացի իրավագետ Ս. Շապիրոն իրավացիորեն նշում է.

*«Օրինականության բնույթի վերաբերյալ տեսակետները, որոնք մի քանի սերունդների ընթացքում դիմակայել են ժամանակի փորձությանը, հաճախ զրոյացվել են մի քանի լավ ձևակերպված հակաօրինակներով»<sup>1</sup>:*

Իրավունքի պատմությունը վկայում է այն մասին, որ օրինականության սկզբունքը պետության կողմից ոչ բոլոր իրավիճակներում է կարևորվել: Խոսքը ոչ թե պետական մարմինների կողմից օրենքի առանձին պահանջների խախտման մասին է, այլ՝ այն դեպքերի, երբ պետությունը, օրինակ՝ հեղափոխական իրավիճակներում, իր իսկ պաշտոնական փաստաթղթերում հնարավորություն է տվել պետական մարմիններին գործել օրենսդրական կարգադրագրերին հակառակ: Օրինակ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ խորհրդային իշխանության ձևավորման փուլում կամ խորհրդային միության փլուզման ժամանակաշրջանում պետությունը պաշտոնական փաստաթղթերով թույլատրեց համապատասխան պետական մարմիններին և պաշտոնատար անձանց որոշակի իրավիճակներում գործել օրենքին հակառակ:

*2.2. Օրինականության սկզբունքի պաշտոնական բացատրումը. Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև ԽՍՀՄ փլուզումը*

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ խորհրդային իշխանության ձևավորման ժամանակաշրջանում պաշտոնապես հայտարարվեց *հեղափոխական* օրինականության մասին, որն ըստ էության ոչ թե օրինականության, այլ օրինականությունից բացառության կամ նպատակահարմարության մասին էր: Այսպես՝ Սովետների VI Համառուսաստանյան Արտակարգ համագումարի 08.11.1918 թ. «Հեղափոխական օրինականության մասին» որոշման 2-րդ կետում սահմանված էր.

<sup>1</sup> Шапиро С. Законность. Пер. с англ. - М., 2021. - С. 62.

«Այսուհետք հասարակել, որ Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության օրենքներից շեղվող կամ դրանց սահմաններից դուրս գործող միջոցառումները թույլատրելի են միայն այն դեպքում, երբ դրանք թելադրված են քաղաքացիական պատերազմի հրատապ պայմաններով և հակահեղափոխության դեմ պայքարով»:

Քաղաքական իշխանությունը պաշտոնապես թույլատրեց համապատասխան իշխանական մարմիններին գործել օրենքին հակառակ: Այդ ժամանակաշրջանի պետական իրավունքի դասագրքերից մեկի հեղինակն Արտակարգ համագումարի այս որոշումը մեկնաբանում էր հետևյալ կերպ.

«Խորհրդային իշխանությունը շար լավ հասկանում է, որ պետք է գործի իրական իրադրությունում, իսկ 1918 թ. իրական իրավիճակն այնպիսին էր, որ ամեն դեպքում և ցանկացած գնով պնդել իրականացնել օրինականության սկզբունքը, ակնհայտորեն անհնար կլիներ: Նշելով այս իրական պայմանները՝ Արտակարգ համագումարը թույլ է տալիս միայն որոշ դեպքերում չկիրառել օրենքը, միայն բացառիկ դեպքերում է թույլ տալիս ազատվել օրինականության ստորադասությունից, բայց այդ բացառումը պայմանավորում է կրկին օրենքով, օրինական իրադրությամբ, այն է՝ օրենքներից բացառության համար սահմանվել էր հայտնի օրինական ձևը»<sup>1</sup>:

Խորհրդային իշխանությունը փաստորեն իր մարմինների հակաօրինական վարքագծին տվեց օրինական ձև: Մյուս կողմից՝ դժվար էր պատկերացնել, որ իր դիրքերն ամրապնդած խորհրդային քաղաքական իշխանությունը կհանդուրժեր, եթե, օրինակ, խորհրդային դատավորը փորձեր հակադրվել քաղաքական իշխանության ընդունած աղաղակող անտրամաբանական օրենքին: Պատահական չէ, որ Խորհրդային իշխանությունն իր դիրքերն ամրապնդելուց հետո զաղափարախոսական հարթությունում

<sup>1</sup> Малицкий А. Советское государственное право (очерки). – Киев, 1926. – С. 11.

Ֆետիշացրեց օրինականության սկզբունքը՝ այն բարձրացնելով «սկզբունքների թագուհու» կամ «սկզբունքների սկզբունքի» աստիճանի:

Խորհրդային օրինականության պահպանման դիգորիզմը (թերևս միայն գաղափարախոսական իմաստով) տևեց մինչև ԽՍՀՄ փլուզումը: Ճգնաժամային (փլուզման) իրավիճակում հայտնված խորհրդային պետությունը կրկին պաշտոնապես սահմանեց օրենքին հակառակ գործելու հնարավորություն: Այսպես՝ Ռուսաստանի Սովետական դաշնային Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական պատգամավորների V համագումարը 01.11.1991 թ. թիվ 1831-1 որոշմամբ թույլատրեց Նախագահին տնտեսական գործունեության ոլորտում ընդունել ակտեր, որոնք հակասում էին օրենքներին: Այսպես՝ որոշման 3-րդ կետում նշված էր.

*«ՌԽՖՍՀ նախագահի հրամանագրերի նախագծերը (...), փնտեսական բարեփոխումների ընթացքն օպերատիվ կարգավորելու նպատակով, որոնք հակասում են ՌԽՖՍՀ գործող օրենքներին, ՌԽՖՍՀ նախագահը ներկայացնում է ՌԽՖՍՀ Գերագույն խորհուրդ, իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում՝ ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությանը: Եթե յոթ օրվա ընթացքում ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդը (...) չի մերժում ՌԽՖՍՀ Նախագահի հրամանագրի նախագիծը, ապա հրամանագիրը մտնում է ուժի մեջ»:*

Ինչպես 1918 թ., այնպես էլ 1991 թ. խորհրդային իշխանությունն օրենքով գործադիր մարմիններին հնարավորություն տվեց գործել օրենքներին հակառակ, այսինքն՝ հակադրվել այդչափ «հարգված» օրինականության սկզբունքին: Ընդ որում, ռուսական սահմանադրական իրավունքի դոկտրինում 01.11.1991 թ. որոշումն առանձնակի քննադատության չարժանացավ, գիտնականները պարզապես նկարագրում (փաստում) էին առկա իրավիճակը. «Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների V համագումարը նախագահին իրավունք է տվել մեկ տարվա ընթացքում տնտեսության ոլորտում հրամաններ արձակել, որոնք նույնիսկ չեն

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՎ ԴՍՏԱՐՈՎ 2(110)2023

համապատասխանում օրենքին»<sup>1</sup>, կամ «Ժողովրդական պատգամավորների համագումարը նախագահին իրավունք է տալիս հրամանագրերով լուծել տնտեսական հարցերը՝ շեղվելով ՌՍՖՍՀ օրենքներից»<sup>2</sup>: Այս հեղինակավոր սահմանադրագետները պարզապես հաստատում են պատմական փաստերը, սակայն այս որոշումների իրավաչափության վերաբերյալ գնահատականներ չեն տալիս: Միգուցե նրանց լռությունը պայմանավորված է այն բանի գիտակցումով, որ ճգնաժամային այդ ժամանակահատվածում օրենքի ձևական պահանջները պահպանելու արդյունքում կարող էր երկիրը (տնտեսական կյանքը) կործանվել:

Այս պատմական համառոտ վերլուծությունից պարզ է դառնում, որ քաղաքական իշխանությունը երբեմն օրինականության սկզբունքից պաշտոնապես կատարում է բացառություններ: Հարց է ծագում, իսկ իրավունքի սկզբունքներն արդյոք կարո՞ղ են պարունակել բացառություններ, օրենսդիրն արդյո՞ք կարող է սահմանել այնպիսի կանոններ, որոնք ըստ էության հակադրվում են սկզբունքներում ամրագրված գաղափարներին:

### 2.3. Օրինականության սկզբունքից բացառությունը

2.3.1. Իրավունքի սկզբունքները և դրանից բացառությունները: Իրավունքի սկզբունքներից բացառություններ նախատեսելու հարցն համակողմանի քննարկվել է հետխորհրդային ժամանակաշրջանում: Օրինակ՝ Ռ. Խ. Յակուպովը 1990-ականներին նշել է.

*«Սկզբունքները միշտ կարգավորում են միմյանց հետ մրցակցող երկու խումբ նորմերի հարաբերակցությունը: Դրանցից առաջինը սկզբունքի բովանդակությունը սահմանող նորմերն են, իսկ երկրորդ խումբը՝*

<sup>1</sup> **Кутафин О.Е.** Предмет конституционного права. - М.: Юрист, 2001. - С. 202; **Кутафин О.Е.** Источники конституционного права Российской Федерации. - М.: Юрист, 2002. - С. 98-99.

<sup>2</sup> **Авакьян С.А.** Конституционное право России: учеб. пособие. В 2 т. Т. 2. 5-е изд., перераб. и доп. - М.: Норма: ИНФРА\*М, 2014. - С. 331.

*հիմնական կանոնից կարարված բացառություններն են: (...) Այդ պարճառով ամենաընդհանուր ձևով կարելի է ասել, որ ցանկացած սկզբունք ընդհանուր կանոն է իր բացառություններով»<sup>1</sup>:*

Այն որ իրավունքի սկզբունքները կարող են ունենալ բացառություններ, ընդունում են շատերը<sup>2</sup>, սակայն բանավեճն այն հարցի շուրջ է, թե արդյոք անխտիր բոլոր սկզբունքներն ունեն բացառություններ: Բանավիճող կողմերին հատկապես հետաքրքիր է այն հարցը, թե օրինականության սկզբունքն արդյոք կարող է ունենալ բացառություն, թե դա պարզապես օրինախախտում է:

Մ.Լ. Դավիդովան նշում է, որ սկզբունքները կարող են գոյություն ունենալ պայմանական (իրենցից բացառություններ ունեցող սկզբունքներ) կամ անվերապահ (որևէ բացառություն չունեցող սկզբունքներ) նորմատիվ իրավական պահանջների տեսքով<sup>3</sup>: Նշված հեղինակը փաստորեն այն մոտեցման կողմնակիցն է, որ իրավական բացառություններն իրավունքի բոլոր սկզբունքների պարտադիր կամ էական հատկանիշը չէ, իրավունքի որոշ սկզբունքներ կարող են ունենալ բացառություններ, որոնք ըստ էության իրավաչափորեն հերքում են այդ սկզբունքը, կարող են նաև չունենալ նման բացառություններ: Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ նա նշում է.

<sup>1</sup> **Якупов Р.Х.** Правоприменение в уголовном процессе России. Юридические проблемы. - М.: 1993. - С. 139; **Якупов Р.Х.** Уголовный процесс: учебник для вузов. - М.: Зерцало, 1998. - С. 60-61.

<sup>2</sup> **Суменков С.Ю.** Исключения в праве: теоретико-инструментальный анализ: монография. - М.: Юрлитинформ, 2016; **Гамбарян А.С.** Внесистемные коллизии и внутрисистемные конфликты принципов права: доктрина, практика, техника // Юридическая техника. 2020. № 14. - С. 39-40; **Байдаров М.А.** Имплементация исключений в принципы законодательства: технико-юридический аспект // Юридическая техника. 2020. № 14. - С. 551-552.

<sup>3</sup> **Давыдова М.Л.** Правовой принцип как нормативно-правовое предписание: техника закрепления и механизм действия // Принципы права: проблемы теории и практики: Материалы XI международной научно-практической конференции. В 2-х ч. — Ч. 1 (разделы I-IV). - М.: РГУП, 2017. - С. 214-215.

«Բավական հաճախ «սկզբունքի» գործողությունը ենթադրում է բացառություններ (...) այդ բացառությունները թույլատրելի են միայն օրենքով խիստ սահմանված դեպքերում և սահմաններում, սակայն դրանց առկայությունն ինքնին չի վկայում «իրավունքի սկզբունքի» թերարժեքության մասին, այլ դրված է, հավանաբար, դրա բնույթի մեջ: Իրոք, օրենսդրության մեջ կան բացարձակ՝ բացառություններ թույլ չտվող սկզբունքներ, բայց դրանց քանակն ամենևին էլ գերակշռող չէ»<sup>1</sup>:

Սույն հոդվածի տեսանկյունից հետաքրքրական է այն, որ հեղինակը, որպես բացառություն չնախատեսող սկզբունքի օրինակ, նշում է հետևյալ քրեադատավարական դրույթը. «քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթակա են միայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը և դաշնային օրենքին» ( ՌԴ քր. օր.-ի 8.1.-րդ հոդվածի 1-ին մաս): Իրականում նշված սկզբունքն ինքնին նախատեսում է բացառություն: «Դատարանն անկախ է և ենթակա է (...)» ձևակերպումն արդեն իսկ պարունակում է բացառություն. մի կողմից նշվում է, որ դատավորներն անկախ են, մյուս կողմից, որպես անկախության գաղափարից բացառություն, նախատեսում է, որ նրանք ենթակա են օրենքին:

Ի տարբերություն Մ.Լ. Դավիդովայի, Ս.Յու. Սումենկովը կարծում է, որ իրավունքի բոլոր սկզբունքներն ունեն բացառություններ, ընդ որում, նա սկզբունքների և բացառությունների հարաբերակցությունը դիտում է դիալեկտիկական միասնության մեջ.

*«Սկզբունքների և բացառությունների դիալեկտիկական միասնությունն այն է, որ յուրաքանչյուր սկզբունք կանոն է. իր հերթին, ցանկացած կանոն*

<sup>1</sup> Давыдова М.Л. Указ. соч. - С. 212-213.



*ինքնաբերաբար առաջացնում է դրանից բացառություններ ունենալու առնվազն պոպոնցիալ հնարավորություն»<sup>1</sup>:*

Իրավունքի սկզբունքները չեն կարող չունենալ բացառություններ, հակառակ դեպքում, կարգելափակվի հասարակական հարաբերությունները դիֆերենցիալ (տարբերակված) կարգավորելու հնարավորությունը: Անկասկած իրավունքի սկզբունքներից կատարված բացառություններն օբյեկտիվ անհրաժեշտություն են, քանի որ «բացառությունների միջոցով օրենքի և սոցիալական միջավայրի իրական պայմանների միջև ձեռք է բերվում համապատասխանություն (...) պահպանվում է հասարակության և պետության շահերի հավասարակշռությունը»<sup>2</sup>:

2.3.2. Օրինականության սկզբունքից բացառություն սահմանելու անհաջող փորձերը: Եթե բացառությունները ներհատուկ են իրավունքի բոլոր սկզբունքներին, ապա հարց է ծագում՝ որն է օրինականության սկզբունքից բացառությունը: Առաջին հայացքից թվում է, որ օրինականության սկզբունքից բացառության մասին պնդումն ըստ էության դատողություն է օրինախախտում թույլատրելու մասին:

Նույնիսկ այն տեսաբաններին, ովքեր կարծում են, որ իրավունքի բոլոր սկզբունքներն ունեն բացառություններ, չի հաջողվել հստակ և հասկանալի կերպով ցույց տալ, թե օրինականության սկզբունքից, վերջին հաշվով, ինչ բացառություն է հնարավոր: Այսպես՝ Ռ. Խ. Յակուպովը, ով կարծում է, որ դատավարության բոլոր սկզբունքներն ունեն բացառություններ, հստակ չի ներկայացնում, թե որոնք են օրինականության սկզբունքից բացառությունները: Նա միայն նշում է, որ նպատակահարմարությունը, այսինքն՝ օրենքով պետական մարմիններին տրված ընտրության ազատությունը,

<sup>1</sup> **Суменков С.Ю.** Принципы права и исключения в праве: аспекты соотношения // Государство и право. 2009. № 5. - С. 26.

<sup>2</sup> **Суменков С.Ю.** Указ. соч. - С. 23-30.

օրինականության սկզբունքի բաղկացուցիչ մաս է<sup>1</sup>: Հեղինակն արդյոք նպատակահարմարությունը համարո՞ւմ է օրինականության սկզբունքից բացառություն: Այս հարցին դրական պատասխանել հնարավոր չէ, քանի որ նա, մեջբերված աշխատանքում, հարցի վերաբերյալ բավարար հստակությամբ դիրքորոշում չի հայտնել:

Ս.Յու. Սումենկովին նշում է.

*«Օրինականության սկզբունքից բացառությունները հավանական են, բայց դրանք ապրիորի հակահրավական բնույթ ունեն, հետևաբար, նույնիսկ տերմինաբանական առումով, դրանք նշանակում են ոչ թե որպես բացառություններ, այլ որպես իրավախախտումներ: Իրավախախտումները ոչ մի դեպքում չպետք է նույնացվեն իրավական, օրինական բացառությունների հետ: Իրավախախտումն իրավական նորմերի դրույթներից օրենքով չթույլատրված շեղումն է, դրանք չպահպանելը: (...) Միննույն ժամանակ, օրինականության սկզբունքի և բացառությունների հարաբերակցության խնդիրն ունի ավելի բարդ բնույթ, քան պարզապես իրավախախտման փաստն արձանագրելը»<sup>2</sup>:*

Այս հեղինակին, ով իրավական բացառությունների ուսումնասիրության ոլորտում ունի մեծ ներդրում, չի հաջողվել պատասխանել այն հարցին, թե օրինականության սկզբունքից ինչպիսի բացառություն է հնարավոր: Նա մի կողմից նշում է իրավախախտման մասին, մյուս կողմից հերքում է, որ իրավախախտումը կարող է լինել իրավական բացառություն:

Օրինականության սկզբունքից միակ թույլատրելի բացառությունն իրավունքի սկզբունքների, այդ թվում՝ աքսիոմների, մաքսիմների և օրենքի կոնկրետ կարգավորման միջև աղաղակող անհամապատասխանության պայմաններում օրենքին հակառակ գործելու մասին դոկտրինն է՝ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը:

<sup>1</sup> Якупов Р.Х. Уголовный процесс: учебник для вузов. - М.: Изд. "Зерцало", 1998. - С. 62.

<sup>2</sup> Суменков С.Ю. Принципы права и исключения в праве: аспекты соотношения // Государство и право. 2009. № 5. - С. 25.

2.3.3. Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը՝ որպես օրինականության սկզբունքից թույլատրելի բացառություն: Լեգիստական իրավաբանական պայմաններում օրինականության սկզբունքը և օրենքին հակառակ իրավունքի զարգացման դոկտրինը գտնվում են անթույլատրելի հակադրության մեջ, այսինքն՝ օրինականության սկզբունքից շեղումը որակվում է ոչ թե իրավունքի զարգացում, այլ պարզ օրինախախտում: Մինչդեռ լայն իրավաբանական դեպքում, օրինականության սկզբունքի և contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հարաբերակցությունը հնարավոր է դիտարկել դոկտրինալ ճանաչում ստացած՝ «սկզբունք-բացառություն» տեսանկյունից:

Օրինականության սկզբունքից բացառությունը (contra legem իրավունքի զարգացման դոկտրինը) պետք է տարբերակել contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա օրենքի *կոնկրետ* դրույթին հակադրվելուց: Վերջինս չի կարելի որակել *կոնկրետ* նորմից կատարված բացառություն: Օրինականության սկզբունքից բացառությունը contra legem իրավունքի զարգացման դոկտրինն է, որի հիման վրա դատարանը հակադրվում է օրենքի *կոնկրետ* նորմի կարգավորմանը: Ենթադրենք, որևիցե իրավական համակարգում օրենքին հակառակ իրավունքի զարգացման դոկտրինը՝ որպես օրինականության սկզբունքից բացառություն, ստացել է ընդհանուր ճանաչում: Եթե այդ համակարգում որևէ օրենքի «X» դրույթն աղաղակող անտրամաբանական է կամ անարդար է, ապա դատավորը, հիմք ընդունելով contra legem իրավունքի զարգացման դոկտրինը (օրինականության սկզբունքից թույլատրելի բացառությունը), հակադրվում է օրենքի «X» դրույթին և գործում է իրավունքի սկզբունքի հիման վրա (այդ սկզբունքից բխեցնում է մեկ այլ կանոն): Այս պարագայում դատավորն օրենքի «X» դրույթից բացառություն չի կատարում, այլ գործում է դրան հակառակ:

ՍԱՀՄԱՆԱՐՈՐԴԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(110)2023

Իսկ հետխորհրդային դատավորը հոգեբանորեն պատրա՛ստ է դատական ակտում ուղիղ նշելու, որ հակադրվում է օրենքի այս կամ այն դրույթին: Նախապես նշենք, որ պատասխանը բացասական է:

### 3. Հետխորհրդային դատավորը՝ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հնարավոր հասցեատեր

#### 3.1. Ընդհանուր դրույթներ

Հետխորհրդային դատավորն ամեն կերպ կխուսափի դատական ակտերում նշել, որ իրավունքը զարգացնում է օրենքի դրույթին հակառակ: Նա իրական երևույթը քողարկելու նպատակով կօգտագործի տարբեր ձևակերպումներ և հնարքներ, օրինակ՝ նա կնշի, որ մեկնաբանման միջոցով բացահայտում է օրենսդրի իրական կամքը, կամ կգրի օրենքից բացառություն կատարելու մասին, թեև օրենքով նման բացառություն նախատեսված չէ, բայց երբեք չի բարձրաձայնի իրականության մասին: Հետխորհրդային դատավորը թեև մտովի կգիտակցի, որ նա իրավունքը զարգացնում է օրենքի դրույթին հակառակ, բայց երբեք դրա մասին ուղիղ չի հիշատակի: Այդպիսին է հետխորհրդային դատավորի իրավամտա-ծողությունը, այդպիսին է հետխորհրդային իրավաբանական կրթությունը:

Նմանատիպ հոգեբանական մոտեցումը, իհարկե առավել մեղմ և չափավոր դրսևորումներով, հատուկ է նաև ռոմանագերմանական համակարգերի դատարաններին, երբ նրանք իրականացնում են *exta legem* և *contra legem* գործունեություն, որը քողարկվում է տարբեր կեղծավոր ձևակերպումներով: Ժամանակին այս հանգամանքը լավագույնս նկարագրել է Ս.Ի. Ռակիչը.

*«Գերմանիայում և Ֆրանսիայում դատական պրակտիկայի օրինաստեղծ ուժը պաշտոնապես չի ճանաչվել: Դատարանների contra legem և praeter legem որոշումները կա՛մ խայտառակ կերպով քողարկված էին սովետական պատճառաբանություններով, թե իբր այդ որոշումները*

համապատասխանում են օրենքին, կա՛մ համարվում էին «բացառություններ», որոնք պայմանավորված էին «զուտ գործնական» շարժառիթներով և ենթակա չէին ընդհանրացման: Անգլիայում ամեն ինչ այլ էր: Անգլիացի դատավորը, ինչպես նաև հռոմեացի դատավորը, երբեք և երբեք չի դիտարկվել որպես օրենսդրի ծրագրերի միայն կոյր կատարող<sup>1</sup>:

Ամերիկացի հայտնի իրավագետ Ռ. Դվորկինը նշում է.

«Այն կարծիքը, որ մեր դատավորները երբեմն պետք է անտեսեն իրավունքը և փորձեն այն փոխարինել ավելի լավ իրավունքով, իրավաբանական ֆակուլտետների ուսումնական լսարաններում և նույնիսկ քաղաքական բանավեճերում ամենևին օտար չէ»<sup>2</sup>:

Դատավորն ունի օրենքի պահանջներին հակառակ վարքագիծը իրավաբանորեն արդարացնելու երկու ճանապարհ՝ իրավակիրառ ակտում օրենքով չնախատեսված «ողջամիտ բացառություն» ամրագրելը կամ օրենքին հակառակ (contra legem) իրավունքի զարգացման դոկտրինին դիմելը:

Իրավաբանական հիմնավորման՝ «ողջամիտ բացառություն» ամրագրելու եղանակն առաջին հայացքից թվում է քաղաքական առումով առավել լոյալ (կոռեկտ), քանի որ հետխորհրդային դատավորը զուտ բառօգտագործման առումով բացահայտ չի հակադրվում առաջնային մանդատով օժտված իշխանությանը: Իրականում օրենքի տեքստում չնախատեսված «ողջամիտ բացառություններ» դուրս բերելը պայմանավորված է ոչ այնքան քաղաքական լոյալություն պահելու, որքան քաղաքական իշխանությունից անվտանգ հեռավորություն պահպանելու ցանկությամբ: Դատավորի նման պատճառաբանությունները կարելի է

<sup>1</sup> Раевич С.И. Из вопросов учения о толковании и применении права (Основные направления в буржуазной литературе) // Советское право. - М., 1924. - № 3. - С. 73.

<sup>2</sup> Дворкин Р. Империя права. Пер. с англ. - М., 2020. - С. 154.

հասկանալ, սակայն այն ընդունել չի կարելի, քանի որ այն պարզապես իրականությունը թաքցնելու միջոց է կամ պոզիտիվ պատասխանատվությունից փախուստի ճանապարհ:

Դատավորի՝ օրենքի դրույթին հակառակ դիրքորոշումը հիմնավորելու առավել ընդունելի ճանապարհը *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինն է, երբ դատավորը, հիմք ընդունելով իրավունքի սկզբունքները, գործում է իրավաչափ, իսկ դատական ակտում օրենքին հակառակ գործելու մասին գրում է ուղիղ, այսինքն՝ գործում է առավել ազնիվ և բացահայտ:

Եթե հետխորհրդային դատավորն այնուամենայնիվ կոնկրետ գործով որոշի քննարկել *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը կիրառելու/չկիրառելու հարցը, ապա նա պետք է իր համար պարզի նաև «դատավորը գործում է օրենքին համապատասխան» սահմանադրական նորմի էությունը:

### 3.2. Հետխորհրդային դատավորի շփումն Օրենսդրի հետ. ենթարկվածություն – համագործակցություն – հակադրություն

Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանադրությունում մի քանի անգամ նշվում է, որ դատավորը (դատարանը) արդարադատություն իրականացնում է օրենքին համապատասխան: Սահմանադրական այդ դրույթները *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի լույսի ներքո պետք է ընթերցել հետևյալ կերպ.

առաջին՝ դատավորը *ենթարկվում է* օրենսդրին, եթե նրա՝ օրենքով ձևակերպված կամքը բավարար չափով ճիշտ է (համապատասխանում է իրավունքի սկզբունքներին՝ *նվազագույն* տրամաբանությանը և արդարությանը),

երկրորդ՝ դատավորը *համագործակցում է* օրենսդրի հետ, եթե նրա կամքն արտահայտված է գնահատողական օրենսդրական հասկացություններում, կամ նա թույլ է տվել օրենսդրական բաց (մեկնաբանման

կանոններով կամ անալոգիայի հիման վրա բացահայտում է օրենսդրի կամքը),

Երրորդ՝ դատավորը *հակադրվում է* օրենսդրին, եթե նրա՝ օրենքով ձևակերպված կամքն աղաղակող (խելագարության կամ մոլագարության հասնող չափի) անտրամաբանական է կամ անարդար է: Այս հակադրության դեպքում դատավորն իրավունքը զարգացնում է օրենքին հակառակ (*contra legem* իրավունքի զարգացման դոկտրին), այսինքն՝ ընդհանուր սահմանադրական կանոնից կատարվում է բացառություն:

Նույնիսկ հետխորհրդային դատավորը չպետք է *ենթարկվի* քաղաքական իշխանության աղաղակող անտրամաբանությանը և անարդարությանը, կամ *համագործակցի* նման անտրամաբանության և անարդարության հետ: Դատավորն իր էության ուժով պարզապես չի կարող համարվել քաղաքական իշխանության ամենցիայի (խելագարության) կամ մոլագարության (կատաղախտի) շարունակողը: Դատավորը կկորցնի իր էությունը և կվերածվի խելագարի կամ մոլագարի (կատաղախտավորի), եթե անվերապահորեն ենթարկվի քաղաքական իշխանության խելագարությանը, կամ համագործակցի քաղաքական իշխանության մոլագարության հետ:

Ճիշտ է՝ դատավորը պետության մեխանիզմի մասն է և ենթարկվում է այդ մարմնի ընդհանուր օրինաչափություններին, սակայն դատավորը, իր էության ուժով, պետք է ինքնաօտարվի հրեշի վերածված «Լեվիաթանի» մարմնից: Սա ոչ այլ ինչ է, քան «անջատում՝ հանուն փրկության»: Դատարանը կկորցնի իր բնական էությունը՝ ողջամտության կամ նվազագույն արդարության հիման վրա գործողի էությունը, եթե կոնկրետ դեպքով չանջատվի խելագարի կամ մոլագարի վերածված «Լեվիաթանի» մարմնից:

«Լեվիաթանի» մարմնից դատավորի անջատումը, այսինքն՝ «Լեվիաթանի» ընդունած օրենքի կոնկրետ դրույթին հակառակ գործելը, լեգիտիմացվում է հենց իրավունքի սկզբունքներով, որոնք խտացված

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏՎՈՐՆԵՐ 2(110)2023

արտահայտում են արդարադատության արժեքանական կողմը: Իրավացի են նրանք, ովքեր նշում են, որ «արդարությունը պետք է լինի արդարադատության մեխանիզմի ողջ օրենսդրական ապահովման իմաստաստեղծ առանցքը»<sup>1</sup>:

Նկատի ունենալով խորհրդային և հետխորհրդային պետություններում դատական իրավունքի զարգացման առանձնահատկությունները՝ չպետք է անտեսել «Լեվիաթանի» մարմնից անջատված դատավորի անձի և ընտանիքի համար գոյաբանական (անվտանգային) նշանակություն ունեցող հարց: Հետխորհրդային դատավորի քիչ հանդիպող ակտիվությունը, որպես կանոն, առաջացրել և առաջացնում է քաղաքական իշխանության զայրույթը և բիրտ հակազդեցությունը, ինչը դատավորին կարող է կանգնեցնել էքզիստենցիալ ընտրության առջև. պահել իրավունքի սկզբունքները՝ հակադրվելով օրենքի կարգավորմանը, թե հակադրվել իրավունքի սկզբունքներին՝ պահպանելով աղաղակող հակաիրավական օրենքը և ապահովելով իր ու ընտանիքի անվտանգությունը (այդ թվում՝ դատավորի աշխատավարձի վրա հիմնված ֆինանսական անվտանգությունը):

Այս իրավիճակը մեղմելու նպատակով՝ պետք է հասկանալ, թե հետխորհրդային դատավորն ինչ բանաձևի հիման վրա պետք է որոշի, թե ե՞րբ կարող է հակադրվել քաղաքական իշխանությանը (օրենքով ձևակերպված քաղաքական կամքին) և իրավունքը զարգացնել օրենքին հակառակ, որպեսզի այդ հակադրությունն իր և ընտանիքի համար չունենա ճակատագրական նշանակություն: Օրենքի աղաղակող անտրամաբանության և անարդարության որոշման չափորոշիչը «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևն է:

<sup>1</sup> Клеандров М.И. Правосудие и справедливость: монография. - М.: Норма: ИНФРА-М, 2022. - С. 47.



3.3. «Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևը

Եթե հետխորհրդային դատավորը խիզախություն ունենա իրավունքը զարգացնել քաղաքական իշխանության կամքին հակառակ, ապա նրան պետք է առաջարկել օրենսդրական կարգավորման աղաղակող անտրամաբանության կամ անարդարության որոշման այնպիսի բանաձև, որի հիման վրա նրա կայացրած որոշումը կմեղմի կամ կչեզոքացնի քաղաքական իշխանության «զայրոյթը» և դրանից բխող վտանգները:

Դատավորը քաղաքական իշխանության՝ օրենքով ձևակերպված կամքին հակադրվում է իրավունքի սկզբունքների հիման վրա: Այս սկզբունքների բովանդակությունը կարող է գնահատվել «ողջամիտ մարդու» բանաձևով (reasonable person standard), այսինքն՝ միջին վիճակագրական մարդն արդյոք օրենքի կարգավորումը կհամարեր աղաղակող անտրամաբանական կամ անարդար, թե ոչ: Սակայն հետխորհրդային այն պետություններում, որտեղ դեռևս գերակայում է էթատիզմը, օրենքի կարգավորման աղաղակող անտրամաբանությունը կամ անարդարությունը՝ նույնիսկ «ողջամիտ մարդու» բանաձևով որոշել կարող է դատավորի համար առաջացնել ողբերգական հետևանքներ, ուստի ստիպված ենք նվազեցնել չափորոշիչը:

Այն դեպքերում, երբ օրենքին հակառակ իրավունքի զարգացումը կարող է առաջացնել քաղաքական իշխանության սուր հակազդեցությունը, ապա հետխորհրդային դատավորը, օրենսդրական կարգավորման անտրամաբանության կամ անարդարության աղաղակող լինելը կարող է գնահատել «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով: Այսինքն՝ դատավորը կարող է գործել օրենքի կարգավորմանը հակառակ, եթե վստահ է, որ իր որոշումն արտահայտում է նույնիսկ տասնչորս տարեկանը լրացած երեխային հասու պարզ ճշմարտություն, այնպիսի ճշմարտություն, որը կստանա հասարակական անվերապահ ճանաչում:

Որպեսզի դատավորը «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով որոշի, թե օրենսդրական կարգավորումն արդյոք աղաղակող անտրա-

մաբանական կամ անարդար է, նա այդ պարզ հարցը կարող է հետազոտման էմպիրիկ մեթոդաբանության հիման վրա (ոչ դատավարական ձևով) քննարկել տասնչորս տարեկանը լրացած երեխայի (երեխաների) հետ: Եթե խնդրի վերաբերյալ երեխայի լուծումները, մոտեցումները նույնպես կհակադրվեն օրենսդրական կարգավորման հիմքում դրված գաղափարին, ապա դատավորը վստահաբար կարող է տվյալ կարգավորումը որակել «աղաղակող անտրամաբանական կամ անարդար» և, օրենքին հակառակ իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա, հակադրվել քաղաքական իշխանության կամքին:

«Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի կիրառման տեսանկյունից կարևոր են ստորև նշված հանգամանքները:

Նախ՝ խրթին իրավաբանական հարցով «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևը չի կարող կիրառվել, քանի որ նման գործերով աղաղակող կարող է լինել գործի *բարդությունը*, բայց ոչ՝ օրենսդրական դրույթի *անտրամաբանությունը կամ անարդարությունը*:

Երկրորդ՝ «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի ցածր չափորոշիչը հետխորհրդային դատավորին ազատում է օրենսդրական դրույթների բարոյափիլիսոփայական հիմնավորումների վերաբերյալ խրթին հարցերով բանավեճերից: Հետխորհրդային դատավորը չի ներթափանցում (թերևս, չի էլ կարող ներթափանցել) օրենսդրական կարգավորման բարոյափիլիսոփայական խորքերը:

«Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի պահանջներն այն աստիճանի ցածր են, որ դրա հիման վրա գործող հետխորհրդային դատավորը չի մտածի, որ իրավունքն օրենքի կարգավորմանը հակառակ զարգացնելու դոկտրինն իր վրա դնում է չափազանց մեծ պատասխանատվություն, մինչդեռ ինքը (հետխորհրդային դատավորը) չի տիրապետում Ռ. Դվորկինի նշած՝ «փիլիսոփա-դատավոր Հերկուլեսի» նման գերունակությունների<sup>1</sup>: Ի դեպ, հայ դատավորները երբեմն նշում են, որ

<sup>1</sup> Дворкин Р. Империя права / пер. с англ. - М., 2020. - С. 450-456.

իրավաբան գիտնականները նրանցից պահանջում են հերոսություն, մինչդեռ նրանք դատավորներ են, ոչ թե՛ հերոսներ:

«Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի պահանջներն այն աստիճանի ցածր են, որ հետխորհրդային դատավորից, ով հանդիպում է օրենքի կարգավորման աղաղակող անտրամաբանության կամ անարդարության, չի պահանջվում ո՛չ գերմարդկային ունակություններ, ո՛չ էլ հերոսություն: Երբ դատավորը գործում է jus-ի (իրավունքի սկզբունքների) հիման վրա, ապա նա իրականացնում է իր բնությամբ պայմանավորված յուստիցիոն (justitia) գործունեություն. դա գերմարդկային ունակություն չէ, առավել ևս՝ հերոսություն: Այո՛, աղաղակող անտրամաբանական կամ անարդար օրենքի կարգավորմանը հակառակ գործելը խիզախություն է: Հետխորհրդային դատավորից պահանջվում է խիզախություն, որպեսզի նա կարողանա հակադրվել քաղաքական իշխանությանը և իրավունքը զարգացնել օրենքին հակառակ, սակայն այդպիսին է արդարատության (justitia) էությունը, այդպիսին է դատավորի մասնագիտական արժանապատվության պահանջը:

Դատավորը հերոսություն չի անում, երբ հակադրվում է քաղաքական իշխանությանը և նրա ընդունած աղաղակող անտրամաբանական կամ անարդար օրենքի կարգավորմանը, երբ օրինակ՝ քաղաքական իշխանությունն օրենքով՝ հեռարձակողին արգելում է ուղիղ եթերի ժամանակ որևէ դեպքում հայիոյանք հեռարձակելը, կամ երբ տնտեսվարող կազմակերպությունից պահանջում է վճարել պետական տուրք, այնպիսի գործունեության համար, որի իրականացումը համավարակի պատճառով նույն քաղաքական իշխանությունը ժամանակավորապես արգելել է, կամ երբ տնտեսվարող կազմակերպությունից մի կողմից՝ պահանջում է կատարել հարկային պարտավորությունը, մյուս կողմից՝ արգելանք է դնում կազմակերպության բանկային հաշիվների և գույքի վրա, կամ երբ ընտրական հանձնաժողովից պահանջում է քվեաթերթիկները պահպանել չիրկիզվող

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏՎՈՐՆԵՐ 2(110)2023

պահարանում, սակայն քվեաթերթիկների մեծաքանակ լինելու պատճառով դրանք ֆիզիկապես չեն տեղավորվում չիրկիզվող պահարանում և այլն: Այս կարգավորումների աղաղակող անտրամաբանությունը կամ անարդարությունը կհաստատի նույնիսկ տասնչորս տարեկան երեխան:

Ենթադրենք տասնչորս տարեկան երեխաների մայրը նրանց համար սահմանում է մինչև ժամը 20.00 բակից տուն վերադառնալու մասին ընդհանուր կանոն (հին կանոն), իսկ հաջորդ օրն առավոտյան հայտնում է, որ երեխաները պետք է բակից տուն վերադառնան մինչև ժամը 19.00 (նոր կանոն): Մոր սահմանած՝ տուն վերադառնալու մասին հին և նոր կանոնների հակասության դեպքում նույնիսկ երեխան կհասկանա, որ պետք է ղեկավարվի նոր՝ առավել ուշ ընդունված կանոնով, այսինքն՝ պետք է տուն վերադառնան մինչև ժամը 19.00: Իսկ նմանատիպ իրավիճակում ինչպե՞ս վարվեց հայ դատավորը, նա ինչպե՞ս վերաբերվեց Օրենսդրի՝ հին և նոր օրենքների հակասության դեպքում հին օրենքին նախապատվություն տալու մասին աղաղակող (խելագարության աստիճանի) անտրամաբանական կարգավորմանը. հայ դատավորը պարզապես հնազանդվեց և տևական ժամանակ (2002-2021 թթ.) կիսեց Օրենսդրի այդ խելագարությունը<sup>1</sup>:

Եթե դատավորը «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով օրենքի կարգավորումը որակի որպես աղաղակող անտրամաբանություն կամ անարդարություն, ապա նվազագույն բանականությամբ և բարոյականությանմբ օժտված քաղաքական իշխանությանն այլ բան չի մնա, քան ընդունել օրենսդրորեն ամրագրված իր կամքի աղաղակող սխալը:

<sup>1</sup> Այս մասին տե՛ս **Ղամբարյան Ա., Կուպեյանց Հ.**, Հին և նոր նորմերի հակասության լուծումը. հետևողական անտրամաբանություն կամ անտրամաբանական հետևողականություն // Դատական իշխանություն: 2018, № 05-06 (227-228), էջ 3-10, **Гамбарян А.С.** Коллизийное правило «lex posterior» в армянском праве // Вестник Российского университета дружбы народов. 2020. Т. 24. № 4. էջեր 1224-1239:

#### 4. Եզրակացություններ

Օրենքի պահանջների անշեղ կատարումը (օրինականությունը) ոչ թե նպատակ է, այլ իրավակարգի որոշակիության և կայունության ապահովման, հասարակական կյանքի ներդաշնակեցման միջոց: Եթե օրենքի ձևական պահանջի կատարման արդյունքում «աշխարհը կարող է կործանվել», այսինքն՝ դրա հետևանքով պետական և հասարակական համակարգը կարող է կաթվածահար լինել, ապա օրինականության նկատմամբ ձևապաշտական մոտեցումը պետք է արմատապես փոխել, և նման իրավիճակներում պետք է հայտարարել՝ «թող օրենքը պարտվի, բայց աշխարհը չկործանվի»:

Իրավունքի բոլոր սկզբունքները պարունակում են բացառություններ: Օրինականության սկզբունքից և «դատավորը ենթարկվում է օրենքին» դրույթից միակ թույլատրելի բացառությունը *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինն է:

Հիմք ընդունելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը՝ հետխորհրդային դատավորի և օրենսդրի շփումները պետք է դիտարկել «ենթարկվածություն – համագործակցություն – հակադրություն» եռաշերտ հարաբերությունների տեսանկյունից:

Հետխորհրդային դատավորը, *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա օրենսդրական կարգավորման անտրամաբանության կամ անարդարության աղաղակող լինելը կարող է գնահատել «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով, որի պահանջներն այն աստիճանի ցածր են, որ հետխորհրդային դատավորի վրա չափազանց մեծ պատասխանատվություն չեն դնում:

## Օգտագործված գրականության ցանկ

1. **Ղամբարյան Ա., Կուպեյանց Հ.**, Հին և նոր նորմերի հակասության լուծումը. հետևողական անտրամաբանություն կամ անտրամաբանական հետևողականություն // Դատական իշխանություն: 2018, № 05-06 (227-228), էջ 3–10:
2. **Авакьян С.А.** Конституционное право России: учеб. пособие. В 2 т. Т. 2. 5-е изд., перераб. и доп. - М.: Норма: «ИНФРА-М», 2014. - С. 331.
3. **Байдаров М.А.** Имплементация исключений в принципы законодательства: технико-юридический аспект // Юридическая техника. - 2020. - № 14. - С. 551-552.
4. **Гамбарян А.** Развитие парламентом права contra constitutionem в Республике Армения // Сравнительное конституционное обозрение. - 2022. - № 4 (149). - С. 134.
5. **Гамбарян А.С.** Внесистемные коллизии и внутрисистемные конфликты принципов права: доктрина, практика, техника // Юридическая техника. - 2020. - № 14. - С. 39-40,
6. **Гамбарян А.С.** Коллизионное правило «lex posterior» в армянском праве // Вестник Российского университета дружбы народов. - 2020. Т. 24. - № 4, էջեր 1224-1239:
7. **Гегель Г.** Философия права. - М.: Юрайт, 2019. - С. 111.
8. **Давыдова М.Л.** Правовой принцип как нормативно-правовое предписание: техника закрепления и механизм действия // Принципы права: проблемы теории и практики: Материалы XI международной научно-практической конференции. В 2-х ч. — Ч. 1 (разделы I–IV). - М.: РГУП, 2017. - С. 214-215.
9. **Давыдова М.Л.** Указ. соч. - С. 212-213.
10. **Дворкин Р.** Империя права / пер. с англ. - М., 2020. - С. 450-456.
11. **Дворкин Р.** Империя права. Пер. с англ. - М., 2020. - С. 154.

12. **Евсеев А. П.** Развитие договорных форм в конституционном праве: украинский и мировой опыт // Сравнительное конституционное обозрение. - 2014. - №1 (98). - С. 36.
13. **Иеринг Р. фон.** Цель в праве. Том первый. - С.-Пб.: Изд. Н.В Муравьева, 1881. - С. 308-309.
14. **Клеандров М.И.** Правосудие и справедливость: монография. - М.: “Норма: ИНФРА-М”, 2022. - С. 47.
15. **Кутафин О.Е.** Предмет конституционного права. - М.: Юристъ, 2001. - С. 202.
16. **Кутафин О.Е.** Источники конституционного права Российской Федерации. - М.: Юристъ, 2002. - С. 98-99.
17. **Малицкий А.** Советское государственное право (очерки). - Киев 1926. - С. 11.
18. **Моргентау Г.** Политические отношения между нациями: борьба за власть и мир // Теория международных отношений: Хрестоматия / Сост.: науч. ред. и коммент. П.А. Цыганкова. - М.: Гардарики, 2002. - С. 78.
19. **Раевич С.И.** Из вопросов учения о толковании и применении права (Основные направления в буржуазной литературе) // Советское право. - М., 1924. № 3. - С. 73.
20. **Суменков С.Ю.** Исключения в праве: теоретико-инструментальный анализ: монография. - М.: Юрлитинформ, 2016.
21. **Суменков С.Ю.** Принципы права и исключения в праве: аспекты соотношения // Государство и право. - 2009. - № 5. - С. 26.
22. **Суменков С.Ю.** Принципы права и исключения в праве: аспекты соотношения // Государство и право. - 2009. - № 5. - С. 25.
23. **Суменков С.Ю.** Указ. соч. - С. 23-30.
24. **Шапиро С.** Законность. Пер. с англ. - М., 2021. - С. 62.

25. **Якупов Р.Х.** Правоприменение в уголовном процессе России. Юридические проблемы. - М., 1993. - С. 139; **Якупов Р.Х.** Уголовный процесс: учебник для вузов. - М.: Зерцало, 1998. - С. 60-61.
26. **Якупов Р.Х.** Уголовный процесс: учебник для вузов. - М.: Изд. “Зерцало”, 1998. - С. 62.

## ПРИНЦИП ЗАКОННОСТИ И ПОЛОЖЕНИЕ “СУДЬЯ ПОДЧИНЯЕТСЯ ЗАКОНУ” В КОНТЕКСТЕ ДОКТРИНЫ РАЗВИТИЯ ПРАВА CONTRA LEGEM

### Аннотация

В статье рассматривается соотношение доктрины развития права contra legem и принципа законности, положения “судья подчиняется закону”. Анализируя принцип законности с точки зрения максимы “пусть гибнет мир, но торжествует закон”, автор приходит к выводу, что неукоснительное выполнение требований закона (законность) - это не цель, а средство. Если неукоснительное соблюдение принципа законности может иметь для общества губительное значение, то из принципа законности нужно сделать исключение и заявить: «Пусть закон проиграет, но мир не погибнет».

Все принципы права, включая принцип законности, имеют исключения. Единственным допустимым исключением из принципа законности и положения “судья подчиняется закону” является доктрина развития права contra legem.

Постсоветский судья, основываясь на доктрине развития права contra legem, может оценить вопиющую нелогичность или несправедливость законодательного регулирования по формуле “четырнадцатилетнего



ребенка”, стандарты которого настолько низки, что избавят судью от возможной «агрессии» политической власти.

**Ключевые слова:** принцип права, максима права, доктрина развития права contra legem, законность, судья действует в соответствии с законом, судья подчиняется закону, “Pereat mundus et, fiat justitia”.

## THE PRINCIPLE OF LEGALITY AND THE PROVISION “THE JUDGE OBEYS THE LAW” IN THE CONTEXT OF THE CONTRA LEGEM LAW DEVELOPMENT DOCTRINE

### Annotation

The relationships between the contra legem law development doctrine, the principle of legality, and the provision “the judge obeys the law” are discussed in this article. By analyzing the principle of legality from the point of view of the maxim “let justice be done, even if the world perish”, the author concludes that strict compliance with the requirements of the law (legality) is not *an end*, but *a means*. If strict observance of the principle of legality can be destructive for society, then an exception must be made from the principle of legality and it must be said: “Let the law lose so that the world will not perish”.

All principles of law, including the principle of legality, have exceptions. The contra legem law development doctrine is the only permissible exception to the principle of legality and the provision “the judge obeys the law”.

A post-Soviet judge may assess the blatant illogicality or injustice of legislative regulation based on the contra legem law development doctrine by the formula of a “fourteen-year-old child”, and the standards thereof are so low that the judge will be saved from possible political “aggression”.

**Keywords:** the principle of law, the maxim of law, contra legem law development doctrine, legality, the judge acts in accordance with the law, the judge obeys the law, “Pereat mundus et, fiat justitia”.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 09.05.2023թ., տրվել է գրախոսության 10.05.2023թ., ընդունվել է տպագրության 27.05.2023թ.:*